



98. ԲԱՆԻՄԱՑ ԴԱՐՎԵԾ

Դարվեշներ խելոք ու սարբաստ<sup>1</sup> կէղնին:

Ձըղի օր ըսիմ՝ աշխար տեսած աղքատ դարվեշ մե, դռնից նալ  
ու գուշ կախուկ, նստած կէղնի ճամպեզրի քարին, կը տեսնա՝ մեկ  
դիեն մուլե մե գիկա, մեկ դիեն՝ տերտեր. ըդոք բարե կիտան, գու-  
զին չընցնան՝ դարվեշ ձեն կիտա:

— Աստվածախոսնե՛ր, արե՛ք քիչ մե զրուցինք:

Մուլեն ու տերտեր կը կանին:

— Ի՛նչ կա, ի՛նչ չկա,— կը հարցու դարվեշ:

— Բան չկա, բան չըմ լսերի,— կըսե մուլեն:

— Ես լե բան չը լսեր իմ: Դու ի՞մալ իս, դարվեշ բարա,— կը  
հարցու տերտեր:

— Աշխար խախանդ՝ ես ի մեշ— քամի, աշխար հեղեղ՝ ես ի  
մեշ— տաշեղ, ըշտե հմլա կապրիմ:

Քիչ վախտ գընցնա, քոռախադի<sup>2</sup> մուլի ու տերտրոջ դուս յելնալ  
չը բոնե՞. կը թողին դարվեշ, փեշեր ուրանց կը ժողվին, քթի մեջ  
փնթփնթալով՝ ամեկ դիու մե կէրթան, քիչ վեռջ կը դառնան գի-  
ւն մըտ դարվեշ:

— Ներսևանց՝ հանգստութե՛ն, դրսևանց՝ խաղաղութե՛ն,— կը-  
սե դարվեշ,— արեք օղորդ ըսեք, օր գացիք՝ էրկուսդ լե մըջ քթին  
չորի՞ն կը փնթփնթեք:

— Դա՛րվեշ բարա,— կըսե մուլեն,— չորփորեր իմ, մըջ ընձի  
նամազմ՝ էրի, օր ըոհաթ պրծնենք:

Դարվեշ կը ծիծղա:

<sup>1</sup> Սարբաստ—համարձակ, ազատախոս (Մ. Բ.):

<sup>2</sup> Կույր բախտի բերումով (Մ. Բ.):

— էդի մեկ սուտ: Դո՛ւ, տերտեր:

Տերտեր կըսե.

— Ե՛ս լե կը փնթփնթենք, հմա իմ խոսքեր ըսելու բան չէ:

— էդի մեկ օղորդ: Աստվածախոսնե՛ր, գուզի՞ք ըսիմ, թե ի՞նչ կը փնթփնթենք:

— Հսե սա՛նք,— կը խնդրվի մոլին:

Տերտեր ձե՛ն չը հանե:

— Մո՛լա, դու օր գացիր աջու, կըսեր՝ «էրթամ, գտերտերի պարտք իտամ, գամ»։ գու օր գացիր ձախու, կըսեր՝ «էրթամ, գմոլի պարտքն իտամ գամ»։ Հմա՛լ է:

— Վո՛ւա, հմալ է,— կըսե մոլին:

Տերտերն ամոթու զգլուխ կը կախե:

— Քանի օր ձեր պարտք տալուն ծեր ու վեռչ չկա, չըսօր ես կէղնիմ ձրզի դատարան ու դատավոր, զձեր պարտք պտի կտրիմ. չըմեն հաղ օր կէրթաք, դու՛ ջո՛ւ պարտք կեր, խլըսցու, էն՝ թըղ ուր պարտք ոտե՛ խլըսցու, էլ ձեր մեջ դավի ու թշնամանք չէզնի, չուրի վեռչին դատաստան:

Մոլին ու տերտեր կը պաղքերնին մնան, չըն կոնա ձեն հանի, ամեկ կը թողե կէրթա ուր ճամպով, ու կըսին, չուրի չըսօր, կը զարմանան, թե էդ աղքատ դարվեջ բաբան՝ ի՞մալ ուրանց փնթփնթոցից՝ ուրանց միտք օղորդ կռահեց:

